«Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ԵՐՎԱՆԴ ՂԱԶԱՆՉՅԱՆԻՆ ԵՎ ԳԱԼՅԱ ՆՈՎԵՆՑԻՆ

Մայիսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի հարկի ներքո, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայոց Եկեղեցու բարձր գնահատանքին արժանացան հայ թատրոնի և կինոյի վաստակավոր երախտավորներ Երվանդ Ղազանչյանը և Գալյա Նովենցը: Ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ արվեստի երկու նվիրյալներին հանձնվեցին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշաններ:

Հանդիսությունը բացվեց Տ. Պարթև աբեղա Բարսեղյանի ողջույնի խոսքով: Այնուհետև մեծարյալների կյանքի ուղուն և այսօրվա մշակութային կյանքում ունեցած մեծ ավանդին անդրադարձավ ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը՝ խոսելով նրանց ստեղծագործական խառնվածքի, մասնագիտական ոլորտում ունեցած նվաճումների և Ղազանչյան-Նովենց օրինակելի ընտանիքի մասին: Տիկին Պողոսյանը նաև շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ մշակույթի երախտավորներին բարձր գնահատանքի արժանացնելու համար:

Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը ներս բերեց Հայրապետական Սրբատառ Կոնդակները, որոնք ընթերցվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի և լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի կողմից:

Երվանդ Ղազանչյանին ուղղված Հայրապետական կոնդակում ի մասնավորի ասվում է. *«Մեծ է Ձեր ավանդը հատկապես Պարոնյանի անվան թատրոնում, որտեղ մինչ օրս շարունակում եք գեղարվեստական դեկավարի Ձեր պաշտոնը արդյունավորել նորանոր իրագործումներով և ստեղծագործական նվաճումներով: Թատերական արվեստի նվիրյալի նույն նախանձավոր ոգով Դուք Ձեր կարողություններն ու գիտելիքներն ի սպաս եք դնում նաև երիտասարդ դերասան-դերասանուհիների պատրաստության գործին՝ Ձեր ունեցած տարիների հարուստ փորձը փոխանցելով նրանց»:*

«Ուրախություն է Հայրապետիս համար անդրադառնալ, որ մեծ ժողովրդականություն վայելող և ճանաչում ունեցող դերասանուհիդ տասնամյակներ շարունակ իր դերասանական բարձր վարպետությամբ և տքնաջան աշխատանքով հարստացրել է հայ թատրոնը և կինոն: Հավատարիմ մնալով Ձեր անվանի ուսուցիչների՝ Արմեն Գուլակյանի և Վարդան Ամեմյանի ավանդին՝ Դուք Ձեր անմնացորդ ջանքերն եք բերել հայ թատերական արվեստի զարգացմանը...: Դուք և Ձեր սերնդակիցները ուրվագծեցիք հայ թատրոնի և կինոյի մի ժամանակաշրջան, որն աներկբա կարելի է անվանել վերելքի շրջան: Ուրախ ենք, որ այսօր հավատավոր մեր ժողովուրդը արժանիորեն մեծարում է Ձեզ՝ դասելով մշակույթի իր երախտավորների շարքում»,- ասվում է Գալյա Նովենցին ուղղված Հայրապետական կոնդակում:

Ապա Նորին Սրբությունը մեծարյալների կուրծքը զարդարեց Հայ Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշաններով:

Շքանշանների հանձնումից հետո երախտագիտության խոսքեր ասացին Գալյա Նովենցը և Երվանդ Ղազանչյանը:

«Այսօր ինձ համար առանձնահատուկ օր է...: Ունեցել եմ մրցանակներ, այդ թվում՝ նաև միջազգային, բայց այս մեկն ամեն ինչից վեր է: Խորապես շնորհակալ եմ և խոնարհվում եմ»,-իր սրտի խոսքում նշեց Գալյա Նովենցը:

Երվանդ Ղազանչյանն անդրադարձավ Ս. Էջմիածնի իր կյանքում ունեցած դերին՝ մասնավորապես ընդգծելով. «Հայ Եկեղեցին և Ս. Էջմիածինը ճառագեց իմ մեջ հավատի զգացում, իսկ եթե հավատում ես, դառնում ես բարի, ներող, օգնող: Այդ բոլորի և այս մեծ պարգևի համար շնորհակալություն Ձեզ, Վեհափառ Տեր, և ամենքիդ»:

Այս առիթով մեծարյալներին շնորհավորեցին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Վահե Շահվերդյանը և Ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գևորգյանը: Նրանք ընդգծեցին, որ նման պարգևաբաշխումները կարևոր խթան են թատրոնի զարգացման համար, որոնցով Հայ Եկեղեցին արժևորում է թատրոնի դերն ու նշանակությունը մշակութային կյանքում:

Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության և գնահատանքի խոսքով: Նորին Սրբությունը նկատեց, որ այս պարգևներն արտահայտությունն են մեր ժողովրդի սիրո և գնահատանքի՝ հանդեպ երկու մշակութային գործիչները՝ մաղթելով Տիրոջ զորակցությունը նրանց հետագա ստեղծագործական կյանքում:

Հանդիսության ընթացքում հայ և եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարմամբ ելույթ ունեցավ Մայր Տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Ռուբեն Շարբաթյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏԱՐ ԿՈՒՍԻՉՈՎՆԻՆ ԵՎԻՆՈՒ .ՀԱՐՀՈՒՍՏՈՒՄԸ ԿԱ ԿՅՈՒՂԱՄԻՋՈՑ ՊԵՏՔԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԴՐՈՒՄԸ
ՀԵՏՈՒՄԻՆՋՈՒՆ ՎԱՂԻՆԻՑ ՍՏԱՏ ՑԱՐԱՍՈՒՄՈՎԱԾՈՒՄԸ ԱՌԻՍՏԱԿԱՆԱՑՈՒՆ